

ԱՐՄԱԻՐԵԱՆ ՆՈՐ ԲԵՒԵՌԱԳԻՐ

Գիւղական ուսուցիչների և քահանաների ձեռքով խուզարկութիւններ անելով հին և մինչև այժմ անծանօթ մնացած արձանագրութիւններ գտնելու նպատակաւ՝ յաջողուեց ինձ երևան հանել մի նոր բեւեռագիր արձանագրութիւն։ Սև — կապտագոյն որձաքարը, որի վրայ փորագրուած է այդ հնագրեան յիշատակարանը, գտնուեց Սարգարապատում մի գիւղացու (Կնեազ Պօղոսով) ձիթհանքի պատի մէջ։ Այդ քարը կերտուի Էջմիածին և կգրուի ճեմարանում միւս բեւեռագիր արձանագրութեանց մօտ, առանձին սենեակում նոյն իսկ ճեմարանի շինութեան մէջ, զերծ փչացուելու կամ եղծանուելու վտանգից։ Արձանագրութիւնը 14 տող է, ամբողջ գրութեան մակերեսը թէ 14×15 վերշուկ։ Տեղտեղ կան ջնջուածներ։ Արձանագրութիւնից առնուած մի քանի լուսանկարներ կղրկուին Պետերբուրգ Հնագիտական Րնկերութեանը, Սքսփորդ ուսուցչապետ Սէյսին և Փարիզ՝ Գիյառին։ Ի գէտ՝ մի քանի խօսք Արմաւրի մասին։ Հարկաւ պնդել թէ ճիշտ այն տեղումն է հին Արմաւիրը, որտեղ այժմ կանգնած է «Արմաւիր» բլուրը, Կեչըռլուի մօտ, առնուազն վաղաժամ է, քանի որ չեն կատարուած կանոնաւոր պեղումներ։ Բայց դրապէս կարելի է հաստատել, որ Արմաւիրը չպէտք է հեռու լինի այժմեան «Արմաւրից», որը հէնց հեռուից յիշեցնում է մեզ իւր տեսքով Խորենացու «ոստը»։ Ուստի և այնչափ էլ վարկպարազի չէ այժմեան «Արմաւրի» շրջակայքում զանազան շինութեանց մէջ գտնուած բեւեռագրերին տալ Արմաւիրեան կոչումը։ Ակներև է, որ ռամիկը օգտուել է այդ մեծամեծ, ողորկ, սրբատաշ, որձաքար սալերից, տե-

զափոխելով նրանց մի ընդհանուր պատուարից գէպի իւր գոմերը, ձիթհանքները, գործածելով այդ պատրաստի նիւթը իւր առօրեայ պիտոյքներին: Կանոնաւոր պեղումներով հնարաւոր էր գտնել այն պատուաստը կամ քաղաքատեղը, որտեղից առնուել են այդ սալերը:

Մի քանի խօսք էլ Արմաւիր անուան ստուգաբանութեան վերաբերութեամբ: Անձնական տկարութեան պատճառով մեկնելով արտասահման, թերեւ երկար ժամանակ բարեպատեհ առիթ չունենամ վերագառնալու իմ «Խորենացու Պատմութեան Ուսումնասիրութեանցը», ուստի և աւելորդ չեմ համարում մի երկու խօսքով ներկայացնել ընթերցողին Արմաւիր անուան իմ տուած ենթադրական ստուգաբանութիւնը: Արմաւիր, ըստ իմ կարծեաց, նշանակում է «արմաւի կամ արմաւենու քաղաք» = Արմաւիր: Ի՞նչ քաղաքների նշանակ է սեմական յատուկ անունների վերջում: Այս ստուգաբանութիւնը ըստ երեւութին շատ նման է ժողովրդական կամայական սուրբական մեկնութեանց, ինչպէս Ակոռի = «արկ ուռի», Նախճաւան = «Նախ իջւան» և այլն: Բայց ես աչքի առաջ ունիմ հետեւեալ հաւանականութիւնը: Կրօնական քաղաքները հնումը Առաջաւոր Ասիայում զրացի ժողովուրդների մէջ շատ անգամ կրում էին միևնոյն անունը, առնուած միևնոյն կամ նման կրօնական պաշտամունքից: Արեգակի պաշտաման նուիրուած քաղաքները, կամ աւելի ճիշդն ասած, այն քաղաքները, որոնք ունէին արեգական պաշտաման նուիրուած տաճարների, կոչւում էին մեծ մասամբ «արեգական քաղաք»: Այդպէս էր, օրինակ, Ասորիքում Բաալբէքը = «Բահալի քաղաքը», որի շքեղ և ապշեցուցիչ աւերակները մնացել են մինչև այսօր, Եգիպտոսում Օնը = «Արեգակը», որոնք յոյներից կոչւում էին Հելիոպոլիս = «արեգական քաղաք», ս. Գրոյ երրայական բնագրում՝ Պէտ-Շէմէշ — «արևի տուն», կամ արաբերէն՝ Այն-Շէմ — «արևի աղբիւր»: Մեր նախնիք այդ քաղաքները կոչւում էին Արեգ քաղաք, այդպէս էլ թարգմանուած է Սուրբ Գրքում և ուրիշ պատմութեանց մէջ: Արեգ քաղաքները կամ Հելիոպոլիսները մի քանի հատ էին: Քաղաքների անուան թարգմանութեան օրինակներ շատ կան, այսպէս, օրի-

նակ, Ս. Գրոց նշանաւոր Սէլան, Ապառաժ Արաբիայում, որն յոյ-
ներից կոչուում է թարգմանաբար Պետրա, իսկ մեր Աստուածաշն-
չում թարգմանուել է Վէմ (Դ. Թագ. ԺԳ. 7, Եսայի ԺԶ. 1, Դատ.
Ա. 36 և այլն): Խորենացու պատմութեան մէջ Բա՛հ-ի-բամիկը
թարգմանուել է Բա՛հ Առաւօտին, ինչպէս ուրիշ գէպքում առիթ-
ենք ունեցել ասպնջույանելու¹⁾: Մակաբայեցւոյ մէջ Հանգիպում
ենք Վարդաբերք թարգմանական քաղաքի անուան: Շատ և շատ
այսպիսի օրինակներ կարելի էր բերել, բայց առ այժմն բաւակա-
նանանք այսչափով: Արեգ քաղաքի նման կային և ուրիշ կրօնա-
կան նշանաւոր քաղաքների, նուիրուած Հեթանոսական ուրիշ
պաշտաման: Դրանցից Արմաւիրի ստուգաբանութեան Համար իմ
ուշագրութիւնս գրաւեց նշանաւոր Թագմիրը (Թագմօր=արմա-
ւենի), որը շինուած էր կամ նորոգուած դեռ ևս Քրիստոսից
1000 տարի առաջ Սողոմոնից (Դ. Թագ. Թ, 18. Մնացորդաց,
Ը. 4): Թագմիրը նշանակում է արմաւենու քաղաք և ժամանա-
կակից է Արմաւիրին: Երբ Ալեքսանդր Մակեդոնացին տիրեց այս
քաղաքին, Թագմիր անունը թարգմանուեց Պալմիր կամ Պալմիրա
(Պալմա=արմաւենի). (Եփրատի աջ ափում, Ասորիքի անապատում):
Իմ կարծիքով Թագմիր, Պալմիր և Արմաւիր միմեանց այնպէս են
վերաբերում, ինչպէս Օն, Բաալ-բեք, Հելիոպոլիս և Արեգ քա-
ղաք: Չանազան երկրներում, զանազան լեզուներով մի և նոյն կամ
նման պաշտաման նուիրուած քաղաքները կոչուել են միևնոյն
անուններով: Եւ ի՞սկ—որ, Խորենացու վկայութեամբ Արմաւիրն
ունէր իւր նուիրական ծառերի պաշտամունքը—Արտամանեակի
կամ Սօսեաց անտառը: Գարագաշի կարծիքը, որով նկրտում է
Արամանեակի սօսիները մեկնել լատիներենով (պլատանա արմե-
նիաք), Համարելով այդ լոկ մի բառախաղ և ոչ ճշմարիտ հե-
թանոսական պաշտամունք, մեզ բողբոլիին անհիմն է թւում և
քմածին: Այդ՝ ընդհանուր հերքման և նոր արթնացող քննադա-
տութեան զարտուղութիւններից մէկը պէտք է համարել: Անկախ
Խորենացուց մենք ունինք ծառերի պաշտաման վկայութիւն: Ներ-

1) Այդ արդէն նախապէս ենթադրել էր Հանգուցեալ Էմինը:

սէս Շնորհալին խօսում է բարտեպաշտների մասին: Բարտեպաշտութիւնը յիշուում է Թոնգրակեցիներին վերաբերեալ ինձ ծանօթ մի ուրիշ տգէտ, բայց հետաքրքրական գրութեան մէջ (անտիպ), այլ և զանազան քարոզ գրքերում (ձեռագիր): Վերջապէս ծառերի պաշտամունքը կայ մինչև օրս էլ մեր ժողովրդեան մէջ, որի մասին այստեղ տեղը չէ երկարաբանել: Իսկ թէ ինչպէս արմաւենու պաշտամունքը Հայաստանում զարձել է սօսու կամ բարտու պաշտամունք, այդ բացատրելը շատ դիւրին է: Կլիմայաբանական պատճառները ի թիւս ուրիշ բաների ազդում են նաև կրօնական ծէսերի և պաշտամանց վրայ: Արխայիների Հօման, սեմականների արմաւենին Հայաստանում կարող էր դառնալ բարտի կամ սօսի, այն բնական պատճառով, որ արմաւենի չէր բուսնում այս վերջին երկրում: Քրիստոնեաներին ծաղկազարդը, որն երուսապէմում «Արմաւենեայ Կիրակին» է, մեզանում տօնուում է շատ անգամ մշտագալար դաբնու կամ ուռենու ռոտերով, իսկ հիւսիսում՝ Սուսաստանում արդէն կոչուում է Ուռենու կիրակի (Վերջէյէ Վերջէյէ-Էյէ): Ահա այս են մօտաւորապէս մեր ստուգաբանութեան հիմունքները:

Իսկ թէ՛ Արմաւիրն է արգեօք տուել իւր անունը և Պաշտամունքը Պալմիրին, թէ՛ վերջինս առաջինին, այդ որոշելը մեր այս խնդրից դուրս է: Կարող է պատահել, որ Արմաւիրը մինչև անգամ անդր-Հայկական քաղաք եղած լինի, շինուած սեմական ժողովրդից, և յետոյ առնուած Հայաստան նոր օտք կոխող հայերից, որոնց սերունդներս այժմ մօտ երեք հազար տարուց յետոյ, նոր սկսել ենք հետախուզել և ժողովել այդչափ հեռաւոր անցեալի թողած յիշատակարանների անգնահատելի բեկորները: Գրութիւնս վերջացնելուց առաջ էլ՝ մի խօսք էլ անցեալ «Արարատում» իմ հրատարակած Խոսրովիկ Թարգմանչի Արտասանութեան մասին: Այդ Արտասանութիւնը նոյնութեամբ գտնուում է Խորենացու Պիտոյից գրքում «Արտասանութիւն Միայնամարտութեան Դաւթի և Գողթաթու» (գիրք Թ, օրինակ գ, եր. 371, գիրք Պիտոյից, 1796 թուի տպ. Վենետիկ), որը վրիպել էր ինչպէս Զարբանաւեանի, նմանապէս և իմ ուշադրութիւնից: Գրուածքի

վերտառութիւնը և սկզբնաւորութիւնը նոյնը լինելով, պէտք էր անշուշտ նախապէս բաղդատել, և այն ժամանակ կերէէր երկուսի նոյնութիւնը, միայն մի քանի բառերի և ընթերցուածնե-րի տարբերութեամբ, թէև վերագրուած երկու տարբեր հեղի-նակների: Այդ բաղդատութիւնն անելը մնում է հետաքրքրուող ընթերցողին:

ՄԻԱԲԱՆ.